

ՀԱՍՏԱՏՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունգարիայի
Հանրապետության կառավարության միջև առևտութեական
կապերի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Հունգարիայի
Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,
գիտակցելով Հայաստանի Հանրապետության և Հունգարիայի
Հանրապետության միջև առևտութեական կապերի կարևորությունը,

ելնելով երկու երկրների միջև փոխահավետ, բազմակողմ
հարաբերությունների ստեղծմանը նպաստելու և նրանց համաշխարհային
տնտեսավարության ընթացքին, ինչպես նաև միջազգային շուկայի
պրակտիկային և նորմերին մոտեցնելու նկատառումից,

ձգտելով Հայաստանի Հանրապետության և Հունգարիայի
Հանրապետության տնտեսությունների աստիճանական
միասնականացմանը համաշխարհային տնտեսական
հարաբերություններին և, ամենից առաջ, եվրոպական տնտեսական
կառույցներին,

փոխադարձ տնտեսական կապերի իրականացման ժամանակ
առաջնորդվելով հավասարության, փոխադարձ շահավետության
սկզբունքներով և միջազգային իրավունքի նորմերով,

համաձայնեցին ներքոհիշյալի վերաբերյալ.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը պատրաստակամություն են հայտնում
ուղիղ փոխադարձ առևտութեական կապերի ստեղծման և
զարգացման համար:

Պայմանավորվող կողմերը կաջակցեն արտաքին տնտեսական
կապերի մասնակիցների (այսուհետ՝ Սուբյեկտներ), միջև փոխադարձ
տնտեսական և առևտութեական հարաբերությունների զարգացմանը
յուրաքանչյուր Կողմի օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 2

Պայմանավորվող կողմերը երկու երկրների միջև առևտությ
հեշտացնելու նպատակով փոխադարձաբար առավել բարենպաստության
կարգավիճակ կտրամադրեն, քան ցանկացած երրորդ երկրին
տրամադրվածն է:

Հոդված 3

Սույն Համաձայնագրի 2րդ հոդվածի դրույթները չեն տարածվում այն առավելությունների վրա, որոնք՝

ա) տրված են կամ կարող են տրվել Պայմանավորվող կողմերից մեկին՝ հարևան այլ երկրների կողմից սահմանամերձ առևտուրը հեշտացնելու նպատակով,

բ) տրված են կամ կարող են տրվել Պայմանավորվող կողմերից որևէ մեկին՝ առևտուրի ազատ գոտիներում, մաքսային կամ այլ տարածաշրջանային պայմանագրերին մասնակցելու հետևանքով:

Հոդված 4

Ապրանքների և ծառայությունների մատակարարումները կիրականացվեն մի կողմից՝ Հայաստանի Հանրապետության և, մյուս կողմից՝ Հունգարիայի Հանրապետության Սուբյեկտների միջև կնքվող պայմանագրերի հիման վրա:

Հոդված 5

Սուբյեկտները հաշվարկները և վճարումները իրականացնում են ազատ փոխարկելի արժույթով՝ կիրառելով ընթացիկ համաշխարհային գները և միջազգային առևտուրում ու ֆինանսական պրակտիկայում ընդունված պայմանները:

Սույն Համաձայնագրով հաշվարկները Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող են իրականացվել միջազգային բանկային պրակտիկայում ընդունված ցանկացած ձևով:

Հոդված 6

Զեավորված և երկու Պայմանավորվող կողմերի համար անհրաժեշտ առևտրատնտեսական կապերի պահպանման նպատակով կարող են կազմվել ինդիկատիվ ցուցաներ, որոնք կընդգրկեն առաջնակարգ նշանակություն ունեցող ապրանքների և ծառայությունների անվանացանկը և ծավալները:

Հոդված 7

Պայմանավորվող կողմերի լիազորված բանկերը սույն Համաձայնագրի կնքումից հետո մեկ ամսվա ընթացքում համաձայնեցնում և

հաստատում են սույն Համաձայնագրից բխող գործառնությունների բանկային ապահովման տեխնիկական կարգը: Այդ նպատակով վերը նշված բանկերը կնքում են միջբանկային համաձայնագրի:

Հոդված 8

Պայմանավորվող կողմերը որոշում են, որ սույն Համաձայնագրի մեկնաբանման, իրագործման կամ կիրառման ժամանակ ծագած տարածայնությունները, ինչպես նաև սույն Համաձայնագրից բխող բոլոր այլ հարցերը պետք է լուծվեն երկկողմ բանակցությունների ճանապարհով:

Հոդված 9

Պայմանավորվող կողմերի լիազորված ներկայացուցիչները սույն Համաձայնագրի կատարման ընթացքին հետևելու նպատակով, անհրաժեշտությունից ելնելով, կիանդիպեն հաջորդաբար Երևանում և Բուդապեշտում:

Հոդված 10

Սույն Համաձայնագրում կարող են փոփոխություններ կամ լրացումներ մտցվել միայն Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 11

Սույն Համաձայնագրից կնքվում է անորոշ ժամկետով:

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը՝ այդ մասին գրավոր ծանուցումով տեղյակ պահելով մյուս Պայմանավորվող կողմին:

Համաձայնագրի գործողությունը ընդհատվում է այդ մասին գրավոր ծանուցումից 6 ամիսը լրանալուց հետո:

Սույն Համաձայնագրի գործողությունը դադարելու դեպքում նրա դրույթները կկիրավեն բոլոր այն պայմանագրերի նկատմամբ, որոնք կնքվել են սույն Համաձայնագրի գործողության ընթացքում, մինչև դրանցում նշված պարտավորությունների լրիվ կատարումը:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում դրա հաստատման մասին Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինների գրավոր ծանուցումից հետո:

Կողմերը պայմանավորվել են կիրառել սույն Համաձայնագրի դրույթները այն ստորագրելուց անմիջապես հետո:

Կատարված է Բուդապեշտ քաղաքում 1992 թվականի ապրիլի 13-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, հունգարերեն և ռուսերեն:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման, իրագործման կամ կիրառման ժամանակ տարածայնություններ առաջանալու դեպքում Պայմանավորվող կողմերը կղեկավարվեն Համաձայնագրի ռուսերեն տեքստով:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1994 թվականի մայիսի 31-ից: